



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ՊԵՏԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՁՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ
 ՀԻՐԸՆԿԱԼՈՒԵՑԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ՄԵՋ**

«Ազգային Առաջնորդարանը ո՛չ միայն հոգեւոր կեդրոն է, այլ նաեւ նոր երազներու ու յոյսերու օրրան, ուր պիտի կարենանք աւելի աշխոյժ կերպով շարունակել եկեղեցւոյ, ժողովուրդին ու յատկապէս երիտասարդութեան մեր ծառայութիւնները», յայտարարեց Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Շաբաթ, 2 Փետրուարի առաւօտուն, ողջունելով պետական անձնաւորութիւններ ու անոնց ներկայացուցիչները Ազգ. Առաջնորդարանի նորակառոյց շէնքի յարկին տակ:

Առաջնորդ Սրբազանին ու մեր Թեմի ժողովականութեան հրաւերով, Ազգ. Առաջնորդարան այցելեցին դաշնակցային ու Քալիֆորնիոյ խորհրդարաններուն, ինչպէս նաեւ հայաշատ կարգ մը ականներու քաղաքապետութեանց անդամներ, ծանօթանալու համար այս յարկին ու անոր հովանիին տակ տարուող աշխատանքներուն: Ընդունելութիւնը կազմակերպուած էր Ազգ. Առաջնորդարանի Առաքելութեան Տարածման եւ Հայ Դատի Արեւմտ. Ամերիկայի Յանձնախումբին համատեղ գործակցութեամբ: Ներկայ էին Հայաստանի հանրապետութեան Լոս Անճելըսի հիւպատոս Տիար Մեսրոպ Շապոյեան, դաշնակցային խորհրդարանի անդամ Էտըմ Շիֆ, Քալիֆորնիոյ խորհրդարանի անդամներէն Տեարք Մայք Ֆիլըր, Էնթընի Փորթանթիսօ, Փօլ Գրիգորեան, Լոս Անճելըսի քաղաքապետական խորհուրդի նախագահ Էրիք Կարսեթի եւ անդամ Տենիս Չէյն, նախկին խորհրդարանական Տիկին Քարոլ Լու, Կլենտէյլի քաղաքապետ Տիար Արա Նաճարեան, Կլենտէյլի շրջանի դպրոցական համակարգի խորհուրդի անդամ Նայիրի Նահապետեան, Կլենտէյլի հանրային Զուլեճի խորհուրդի նախագահ Դոկտ. Արմինէ Յակոբեան եւ խորհուրդի անդամ Դոկտ. Վահէ Փիրումեան, ինչպէս նաեւ խորհրդարանական Պրետ Շըրմընի, Ճէք Սքաթի, քաղաքապետութեան անդամ Ուենտի Կրուէլի, ու Լոս Անճելըս գաւառի 5րդ շրջանի վերակացու Մայքըլ Անթոնովիչի ներկայացուցիչները: Մեր Թեմի ժողովականութենէն ու կազմակերպութիւններէն ներկայ էին Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիգիճեան, Կրօնական Ժողովի, Ազգ. Վարչութեան ու Ազգ. Երեսփոխանական Ժողովի անդամներ, Զ.Յ.Դ. Կեդր. Կոմիտէի անդամ Տիար Գարեգին Խանճեան, Հայ Դատի Ուաշինկթընի յանձնախումբի ատենապետ Քէն Խաչիկեան ու Արեւմտեան Միացեալ Նահանգներու յանձնախումբի ատենապետ Րաֆֆի Համբարեան, Զ.Ս.Ը.Մի. եւ ՀՕՄի Կեդրոնական ու Շրջանային Վարչութեանց, Համազգայինի Շրջ.

Վարչութեան, Թեմիս Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինի, Եկեղեցիներու հոգաբարձութեանց ներկայացուցիչները, Ազգային Առաջնորդարանի բարերարներ ու բարեկամներ:

ԾԱՆՕԹԱՅԻՄ

Ընդունելութիւնը կազմակերպուած էր երկու ընդհանուր բաժինով: Ժամը 10էն սկսեալ, յաջորդաբար Ազգ. Առաջնորդարան ժամանող անձնաւորութիւնները, Ազգ. Վարչութեան, Հայ Դատի ու Ազգ. Առաջնորդարանի Առաքելութեան յանձնախումբերու եւ Տ. Օ. Մարմինի անդամներու կողմէ առաջնորդուեցան նորակառոյց շէնքի տարբեր բաժանմունքները, սկսելով «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն Մատուռ»էն. անոնց հակիրճ բացատրութիւններ տրուեցան այն աշխատանքներուն մասին, որոնք կը տարուին այս յարկին ու անոր հովանիին տակ, բաւարարելու համար ծխական շրջաններու եւ Ազգ. Վարժարաններու կարիքները, քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքին գործունէութիւնը եւ այլ ծառայութիւններ: Ապա, հիւր ու հիւրընկալ համախմբուեցան «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ, ուր արտասանուեցան սրտի խօսքեր, կատարուեցաւ յուշանուէրներու փոխանակում:

ՈՂՋՈՅՆԻ ՈՒ ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔԻ ԽՕՍՔԵՐ

Հանդիսավարն էր Ազգ. Առաջնորդարանի Առաքելութեան ու Հայ Դատի յանձնախումբերու անդամներէն Տիկ. Փաթիլ Աբոշեան-Փասպարեան: Ան առաջին հերթին ողջունեց պաշտօնական անձնաւորութիւններն ու հիւրերը, ու յիշեցնելէ ետք, որ Ազգ. Առաջնորդարանի պաշտօնական բացումը տեղի ունեցած էր անցեալ 6 Մայիսին, նկատել տուաւ, որ այս հանդիպումը կազմակերպուած է պետական գործիչներուն ծանօթացնելու համար Ազգ. Առաջնորդարանի նոր շէնքն ու անոր յարկին տակ տարուող կրօնական, դաստիարակչական ու ժողովրդանուէր ծառայութիւններու դաշտերը: Ան հաստատեց, որ Ազգային Առաջնորդարանը յատուկ հոգածութիւն կը ցուցաբերէ մանաւանդ երիտասարդ սերունդներու ազգայինն ու հոգեմտաւոր դաստիարակութեան գործին: Մէկ առ մէկ յիշատակելով ներկայ անձնաւորութիւններն ու ներկայացուցիչները, հանդիսավարը վեր առաւ Ազգ. Առաջնորդարանի նոր շէնքի գոյառման ու աշխատանքներուն մէջ Առաջնորդ Սրբազանին հիմնական դերակատարութիւնը ու գայն հրաւիրեց արտասանելու իր սրտի խօսքը:

Առաջնորդ Սրբազանը գոհունակութիւն արտայայտեց, որ պետական անձնաւորութիւնները ընդառաջած են հրաւերին ու նշեց Ազգ. Առաջնորդարանի բազմաճիւղ աշխատանքները, շեշտելով, որ այս հաստատութիւնը նոր հորիզոններ կը բանայ ժողովրդանուէր ու սերնդակերտ գործի դիմաց: Ան նշեց որ այս հանդիպումը նոյն յարկին տակ կը համախմբէ հայութեան բարեկամներն ու հայկական կազմակերպութեանց ներկայացուցիչները, որոնց միջեւ գործակցութիւնը պիտի շարունակուի նաեւ ապագային:

Էտըմ Շիֆ առաջին հերթին դրուատիքով արտայայտուեցաւ շէնքի ճարտարապետական իրագործումին մասին, շնորհաւորեց Առաջնորդ Սրբազանը, ողջունեց Ազգ. Առաջնորդարանի սերնդակերտ ու ժողովրդանուէր ծառայութիւնները եւ մաղթեց, որ անոնք շարունակուին երկար տարիներ:

Էրիք Կարսեթի ողջունեց ներկաներն ու յատկապէս պետական անձնաւորութիւնները, յոյս յայտնելով, որ յառաջիկայ հանգրուաններուն, Հայկական Տեղասպանութեան ճանաչումը հասնի իր վախճանական հանգրուանին: Յիշատակելով Հայաստան իր ճամբորդութենէն քաղած տպաւորութիւնները՝ ան նշեց, որ այս կառոյցն ալ մէկ մասնիկն է հայութեան մշակոյթին ու պատմութեան, ինչպէս Հայաստանի եկեղեցիներն ու մատուռները, որոնք վկայութիւն են այն իրականութեան, որ Հայաստանը առաջին քրիստոնէայ պետութիւնն է: Ան այս առիթով քաղաքապետական խորհուրդին կողմէ շնորհաւորագիր մը յանձնեց Առաջնորդ Սրբազանին:

Փօլ Գրիգորեան յատկապէս յիշատակեց Հայաստան իր այցելութենէն դրուագ մը, նշելով, որ ականատես եղած է մատուռի մը, որ խորհրդային տարիներուն քանդուած էր ու անոր քարերը գործածուած էին այլ շէնքերու համար, սակայն Հայաստանի վերանկախացումէն ետք, այդ քարերը վերստին հաւաքուած էին ու մատուռը վերակառուցուած: Ան այս դրուագին մէջ տեսաւ մէկ արտայայտութիւնը բազմաչարչար հայութեան փորձառութիւններուն ու վերականգնելու կամքին: Իր խօսքի աւարտին, ան Զալիֆորնիոյ խորհրդարանին անունով շնորհաւորագիր մը յանձնեց Առաջնորդ Սրբազանին:

Էնթընի Փորթանթիսօ շնորհակալութիւն յայտնեց ցուցաբերուած ասպնջականութեան համար, որուն ականատես եղած էր նաեւ Ս. Ծննդեան ճրագալոյցի Ս. Պատարագին առիթով: Ան շնորհաւորեց Ազգ. Առաջնորդարանի նոր շէնքը ու իր կարգին շնորհաւորագիր մը յանձնեց Առաջնորդ Սրբազանին:

Տենիս Չէյն, անդրադառնալէ ետք լիբանանեան իր ծագումին ու հայութեան հետ իր կապերուն, ողջոյնի յատուկ խօսք ուղղեց Էտըմ Շիֆի, որ կը ներկայանայ իբրեւ հայութեան իրաւունքներու պաշտպան ախոյեան մը: Ան շնորհաւորեց հայութիւնը՝ այս նոր շէնքին համար ու համոզում յայտնեց, որ անկէ բարիք պիտի բաշխուի ժողովուրդին: Ապա, ան բեմ հրաւիրեց Կարսեթին եւ իր ու քաղաքապետ Անթոնիօ Վիերակոսայի կողմէ ստորագրուած շնորհաւորագիր մը յանձնեց Առաջնորդ Սրբազանին:

Արա Նաճարեան եւս գնահատանքով արտայայտուեցաւ գեղեցիկ շէնքին մասին եւ դրուատեց Առաջնորդ Սրբազանին ճիգերը՝ անոր մարմնաւորման մէջ: Ան նկատել տուաւ, որ ներկայ օրերուն, ժողովուրդը հաւատքի կարօտ է ու այս կառոյցը ընդառաջում մըն է այդ կարիքին:

Խօսք առին նաեւ Մայքըլ Անթոնովիչի եւ Պրետ Շըրմընի ներկայացուցիչները. առաջինը շնորհաւորագիր մը յանձնեց Առաջնորդ Սրբազանին, իսկ երկրորդը իբրեւ յուշանուէր յանձնեց ամերիկեան դրօշ մը, որ ծածանած է Ուաշինկթընի մէջ, խորհրդարանի շէնքի շրջափակին մէջ: Յայտնենք նաեւ, որ Առաջնորդ Սրբազանին յանձնուեցաւ Զալիֆորնիոյ նահանգապետ Անտոլտ Շուարցընսկերի շնորհաւորական նամակը:

Առաջնորդ Սրբազանը, իր կարգին, պետական անձնաւորութիւններուն յանձնեց Ազգ. Առաջնորդարանի մատրան մանրապատկերը ընդգրկող յուշանուէրներ:

Սրտի խօսքերու աւարտին, ներկաները նախաճաշով հիւրասիրուեցան Տ. Օ. Մարմինին կողմէ եւ ունեցան մտերմիկ զրոյց:

Ազգ. Առաջնորդարանի տարեգրութեանց մէջ յիշատակելի այս օրը իր աւարտին հասաւ կանուխ յետմիջօրէին:

RECEPTION FOR ELECTED OFFICIALS HOSTED BY THE WESTERN PRELACY

On the morning of Saturday, February 2nd, an open house and reception for Southern California elected officials took place under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, at the Western Prelacy headquarters. The event was organized by the Western Prelacy Outreach Committee and the Armenian National Committee Western Region to familiarize the officials with the endeavors and mission of the Prelacy.

Among those in attendance were Deputy Consul General of the Republic of Armenia Mesrob Shaboyan, Congressman Adam Schiff, Assembly members Mike Feuer, Anthony Portantino, and Paul Krekorian, Los Angeles City Council President Eric Garcetti, Councilmember Dennis Zine, former State Assembly member Carol Liu, Glendale Mayor Ara Najarian, Glendale Unified School District board member Mrs. Nairi Nahapetian, Glendale College Board of Trustees members Dr. Armine Hacopian and Dr. Vahe Peroomian, and representatives from the offices of Congressman Brad Sherman, State Senator Jack Scott, Councilmember Wendy Greuel, and Los Angeles County Supervisor Mike Antonovich.

Also in attendance were Central Executive Council member Mr. Khajag Dikijian, Religious and Executive Council members, Representatives Assembly Delegates, A.R.F. Central Committee member Mr. Karekin Khanjian, ANC National Board Chairman Mr. Ken Hachikian, ANC Western Region Board Chairman Mr. Raffi Hamparian and board members, members of Homenetmen, A.R.S., Hamazkayin, Board of Regents, Boards of Trustees members, and benefactors.

As the guests arrived, Executive Council, ANC, Outreach, and Ladies Auxiliary members led them on a tour of the headquarters starting at the “St. Dertad and St. Ashkhen” Chapel and concluding at the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall. Once all the guests were gathered in the hall, the official program commenced with welcoming remarks by Prelacy Outreach Committee member and ANC-WR Board member, Mrs. Patty Aposhian-Kasparian. Mrs. Kasparian went over the activities carried out at the Prelacy from spiritual to educational, emphasizing the special attention given to the spiritual nourishment of the youth. After acknowledging the officials and guests in attendance, Mrs. Kasparian spoke of the invaluable role the Prelate has had in the advancement of the Prelacy and invited him to offer his remarks.

The Prelate began by thanking the officials for accepting the invitation to assemble under one roof and to become more closely acquainted with the endeavors and mission of the Prelacy. The Prelate noted that this reception brings together friends of the Armenian people with our community members, expressing hope that this collaboration continues in the future.

Remarks were subsequently offered by Congressman Adam Schiff, City Council President Eric Garcetti, Assembly members Paul Krekorian and Anthony Portantino, Councilmember Dennis Zine, Mayor Ara Najarian, and representatives from the offices of Supervisor Michael Antonovich and Congressman Brad Sherman, all of whom congratulated the Prelate on the realization of the new headquarters and offered their well wishes. The officials presented the Prelate with congratulatory resolutions from their respective offices and in turn the Prelate presented each of the officials or their representatives with mementos. Governor Arnold Schwarzenegger, who could not attend the reception, had sent a congratulatory letter which was also presented to the Prelate.

Guests then had the opportunity to interact with the officials and with each other during breakfast which was hosted by the Ladies Auxiliary.